



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

27.05.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/21

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Մասնակցությամբ՝
Բողոքաբեր՝ «Սավ-Վաս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Գ. Գրիգորյան
Պատվիրատուի՝ «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ-ի
ներկայացուցիչ՝ Կ. Ամիրբեկյան

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ
քննող անձ)՝ քննության առնելով «Սավ-Վաս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից
26.04.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը
ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին

դադարեցնել՝ 16.04.2019թ. թիվ 4 արձանագրության 1.2 կետով բողոքաբերի հայտն իրականությանը չհամապատասխանող գնահատելու, մերժելու և «Արշակ Ծատուրյան» Ա/Ձ-ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը, ինչպես նաև պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին դադարեցնել 19.04.2019թ. թիվ 5 արձանագրությունը:

Բողոքներ քննող անձի 26.04.2019թ. որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 03.05.2019թ., 16.05.2019թ. և 23.05.2019թ. նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 23.05.2019թ. և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 27.05.2019թ.:

2. «Սավ-Վաս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Սավ-Վաս» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Բողոքաբերն ի թիվս այլ մանակիցների մասնակցության հայտ է ներկայացրել պարավիրատուի կողմից հայտարարված թիվ «ԳՇՊՇ-ԳՀԾՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցման ձևով Արգիշտի 1 հասցեի շենքի պարուհանների ապակիների շենքի վերջնամասում գտնվող ապակիների, շենքի փանիքում գտնվող գմբեթի լվացման ծառայությունների ձեռքբերման ընթացակարգին:

Գնահատող հանձնաժողովի 10.04.2019թ-ի թիվ 3 արձանագրության 1.2 կետով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը մերժվել է և առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել բողոքաբերը:

Գնահատող հանձնաժողովի 16.04.2019թ-ի թիվ 4 արձանագրության 1.2 կետով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը մերժվել հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով 37200 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություններ ունենալու հիմքով և առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Ա/Ձ Արշակ Ծատուրյանը:

Թիվ 4 արձանագրության բովանդակության ուսումնասիրությունից հստակ չի երևում թե կոնկրետ ինչ պարտավորության մասին է խոսքը, սակայն գործում առկա «պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության» վերառությամբ փաստաթղթի, կարելի է եզրակացնել, որ խոսքը վերաբերում է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված դրոշմանիշային վճարներին:

Գնահատող հանձնաժողովի 19.04.2019թ-ի թիվ 5 արձանագրության 4-րդ կետի համաձայնը ներկայացված մասնակից է ճանաչվել Ա/2 Արշակ Ծափուրյանը:

22.04.2019թ. գնահատող հանձնաժողովը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն է հարապարակել, որով սահմանվել է 5 օրյա անգործության ժամկետ:

Գտնում են, որ հանձնաժողովի թիվ 4 արձանագրության 1.2 կետը կազմված են ՀՀ գործող օրենսդրության և Կարգի պահանջների խախտմամբ:

Բողոքաբերի հայտը մերժելու իրավական հիմք նշված է Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետը և 44-րդ կետը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա փվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ փվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Ինչպես արդեն նշել են, վերահսկվող եկամուտների մասով ժամկետանց պարտավորությունները վերաբերում են դրոշմանիշային վճարներին:

Իրավական հարցադրումը որին պետք է տրվի պատասխան հետևյալն է. արդյո՞ք «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պարճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված դրոշմանիշային վճարները հանդիսանում են հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտներ թե ոչ:

Հայտը ներկայացնելու օրվա դրությամբ բողոքաբերի «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» փյալներով որևէ ժամկետանց պարտավորություն չի ունեցել:

Ինչ վերաբերում է դրոշմանիշային վճարներին հարկ եմ համարում նշել, որ այն «ՀՀ 2019թ-ի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի իմաստով պետական բյուջեի եկամուտ չի համարվում, նշեմ ավելին այն չվճարելու համար որևէ պատասխանատվություն նախատեսված չէ, դրա վերաբերյալ հաշվետվության ձև սահմանված չէ:

Բացի այդ 2018թ. հունիսի 11-ի ՀՀ կառավորության Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին թիվ 702-Լ որոշման 11-րդ կետի 2-րդ ենթակետի Կոմիտեի խնդիրներն են պետական հարկերի և վճարների վճարման նկատմամբ հսկողության իրականացումը:

Համաձայն Հարկային օրենսգրքի 6-րդ հոդվածի Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են

- 1) պետական հարկեր, որոնց տեսակներն են
 - ա. ավելացված արժեքի հարկը (այսուհետ նաև ԱԱՀ.),
 - բ. սկզբիցային հարկը,
 - գ. շահութահարկը,
 - դ. եկամտային հարկը,
 - ե. բնապահպանական հարկը,
 - զ. ճանապարհային հարկը,
 - է. շրջանառության հարկը,
 - ը. արտոնագրային հարկը.

- 2) տեղական հարկեր, որոնց տեսակներն են
 - ա. անշարժ գույքի հարկը,
 - բ. փոխադրամիջոցների գույքահարկը:

Հայաստանի Հանրապետությունում չեն կարող սահմանվել այնպիսի հարկեր, որոնք նախատեսված չեն սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով:

Համաձայն Հարկային օրենսգրքի 7-րդ հոդվածի Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են

պետական վճարներ, որոնց տեսակներն են

- ա. պետական տուրքը,
- բ. բնօգտագործման վճարը,
- գ. սոցիալական վճարը,

դ. ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման

(գործողության ժամկետի երկարաձգման) պարտադիր վճարը և օգտագործման պարտադիր վճարը,

ե. հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարը,

զ. կենսաթոշակային վճարը.

տեղական վճարներ, որոնց տեսակներն են

ա. տեղական փուրքը,

բ. տեղական վճարը:

Հարկային օրենսգրքի 6-րդ և 7-րդ հոդվածները հստակ սահմանում են այն բոլոր հարկերի և վճարների տեսակները, որոնց նկատմամբ հսկողություն է իրականացվում հարկային մարմնի կողմից, այլ կերպ ասած վերոգրյալից հետևում է, որ դրոշմանիշային վճարը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտը չէ:

Ավելին, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանի համաձայն՝ սահմանվել է վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ փոփոխ տեղեկանքի նոր ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշների վճարը նույնպես նախատեսված չէ:

Հարկ է նշել, որ բողոքաբերը առաջնորդվել է հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում առկա տեղեկատվությամբ, որից հստակ երևում է, որ հայր ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով բողոքաբերը որևէ պարտավորություն չի ունեցել, դեռ ավելին համաձայն նույն քաղվածքի միասնական հարկային հաշվին բողոքաբերն ունեցել է գերավճար և եթե դրոշմանիշային վճարը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ լիներ, ապա միասնական հաշվին առկա գերավճարի հաշվին այն կմարվեր:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Սավ-Վաս» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝ 16.04.2019թ. թիվ 4 արձանագրության 1.2 կետով բողոքաբերի հայտն իրականությանը չհամապատասխանող գնահատելու, մերժելու և Ա/Ձ Արշակ Ծատուրյանին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը, ինչպես նաև պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին դադարեցնել 19.04.2019թ. թիվ 5 արձանագրությունը:

3. «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 29.04.2019թ. գրությամբ դիմել է «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ-ի՝ (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Սավ-Վաս» ՍՊԸ-ի կողմից 26.04.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ներկայացնելով բողոքի քննության համար նշանակություն ունեցող բոլոր փաստաթղթերի պատճենները, որևէ գրավոր կարծիք չի ներկայացրել:

Պատվիրատուի ներկայացուցիչը ներկայանալով նիստերին հայտնել է իր բանավոր կարծիքը, առ այն, որ ներկայացված բողոքի վերաբերյալ առակություններ չունի:

4. ԳԲԲԱ-ԼՕ-2019/21 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի փաստերի համաձայն՝

«Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ-ի կողմից ապակիների լվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՇՊՇ-ԳՀՇՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի շրջանակում, ի թիվս այլ մասնակիցների 03.04.2019թ. հայտ է ներկայացրել նաև «Սավ-Վաս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն):

Գնահատող հանձնաժողովի 10.04.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Սավ-Վաս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգերի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից 11.04.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցումների արդյունքում պարզվել է, որ «Սավ-Վաս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու (03.04.2019թ.) օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 37 200 ՀՀ դրամ գումարի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը, 16.04.2019թ. թիվ 4 արանագրությամբ կայացված որոշմամբ մերժվել է որ «Սավ-Վաս» ՍՊԸ-ի հայտը և առաջին

տեղն զբաղեցնող մասնակից է ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցնող՝ «Արշակ Ծատուրյան» Ա/Ձ-ին:

Գնահատող հանձնաժողովի 19.04.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Արշակ Ծատուրյան» Ա/Ձ-ն ճանաչվել է ընտրված մասնակից, որից հետո հայտարարել անգործություն և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանով սահմանված հավելվածի՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի 03.04.2019թ. դրությամբ «Սավ-Վաս» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների, միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների հիման վրա պաշտոնական քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Սավ-Վաս» ՍՊԸ-ի կողմից 26.04.2019թ. ներկայացված բողոքն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ... գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ. եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ հարկային օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ ենթակետի համաձայն՝ հարկային մարմինը հարկ վճարողների սպասարկման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները. ... իրական ժամանակում առցանց եղանակով հարկ վճարողի անձնական հաշվի քարտի (այդ թվում՝ հարկային պարտավորությունների և դրանց մարումների) դիտման հնարավորության ապահովում:

Նույն օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկ վճարողը հնարավորություն ունի արտատպելու իր անձնական հաշվի քաղվածքը, որտեղ նշված տեղեկատվությունը համարվում է հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն և, ըստ անհրաժեշտության, ընդունվում է այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

«Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ-ի կողմից ապակիների լվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՇՊՇ-ԳՀԾՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի անդյունքում «Սավ-Վաս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգերի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից 11.04.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցումների արդյունքում պարզվել է, որ «Սավ-Վաս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու (03.04.2019թ.) օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 37 200 ՀՀ դրամ գումարի չափով:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանով սահմանված հավելվածի՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի 03.04.2019թ. դրությամբ «Սավ-Վաս» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների, միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների հիման վրա պաշտոնական քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

Տվյալ դեպքում ՀՀ հարկային օրենսգրքի մեջբերված հոդվածների դրույթների՝ գործի փաստերի հետ համադրման արդյունքում պարզ է դառնում, որ Ընկերությունը, օգտվելով իրեն վերապահված իրավունքից, իրացրել է այն, համոզված լինելով դրա օրինականության և ճշտության մեջ՝ որպես հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն:

Ուստի, նման պայմաններում, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Սավ-Վաս» ՍՊԸ-ն, արտատպելով հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքը, չէր կարող չունենալ լիարժեք և միևնույն ժամանակ օբյեկտիվ համոզմունք ստացված տեղեկատվության հավաստիության նկատմամբ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «Սավ-Վաս» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա (03.04.2019թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն, քանի որ այն, ինչպես ՀՀ հարկային օրենսգրքի 313-րդ հոդվածն է սահմանում, պետք է համարվի որպես հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն, և անհրաժեշտության դեպքում ընդունվի այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Սավ-Վաս» ՍՊԸ-ի կողմից 26.04.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել:

Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝ 16.04.2019թ. թիվ 4 արձանագրության 1.2 կետով բողոքաբերի հայտն իրականությանը չհամապատասխանող

գնահատելու, մերժելու և «Արշակ Ծատուրյան» Ա/Ձ-ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը, ինչպես նաև պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին դադարեցնել 19.04.2019թ. թիվ 5 արձանագրությունը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝**



ԼԵՎՈՆ ՕՎԱՆՅԱՆ